

## Նախարան

«Հայաստանի ֆինանսների վիճակագրությունը (1999-2003)» ժողովածուն ընդգրկում է ՀՀ պետական ֆինանսների վիճակագրությունը, կազմակերպությունների գործունեության ֆինանսական ցուցանիշները, դրամավարկային միջնորդության համակարգը բնութագրող վիճակագրական տվյալները, ինչպես նաև՝ ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից սահմանված արտարժույթների հաշվարկային փոխարժեքները և ապահովագրական ընկերությունների գործունեությունն ու արժեթղթերի շուկան բնութագրող որոշակի տեղեկատվություն:

Պետական ֆինանսների վիճակագրության տեղեկատվական բազան ձևավորվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրված պետական, համայնքների և ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեների կատարման մասին հաշվետվությունների հիման վրա:

Կազմակերպությունների ֆինանսների վիճակագրությունը ներառում է ՀՀ առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների, վճարունակության, միջոցների կազմի, դրանց գոյացման աղբյուրների, ինչպես նաև՝ հաշվարկների վիճակի վերաբերյալ տեղեկություններ: Տվյալների հավաքագրումն իրականացվել է ընտրանքային մեթոդով վիճակագրական մոնիտորինգում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Կազմակերպությունների ընտրանքը կատարվել է ՀՀ ԱՎԾ քիզնես-ռեգիստրի 8212 գործող կազմակերպություններից բաղկացած արդիականացված բազայի հիման վրա: Նշված բազայից ըստ կազմակերպությունների հիմնական գործունեության տեսակի՝ բացակայում են սոցիալական և բնապահպանության ոլորտների կազմակերպությունները, որոնց հիմնական գործունեության տեսակներն են՝

- հետազոտություններ և մշակումներ
- կրթություն
- կեղտաջրերի, թափոնների հեռացում և համանման գործունեություն
- պետական կառավարում
- հասարակական միավորումների գործունեություն
- տնային տնտեսությունների վարման ծառայություններ
- արտերկրյա (էքստերիտորիալ) կազմակերպությունների գործունեություն

Կազմակերպությունները, համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցման մասին» ՀՀ օրենքի

հողված 2-ի, ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի՝ բաժանվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և փոքր ու գերփոքր կազմակերպություններ: 1176 խոշոր և միջին կազմակերպությունները հետագուտվել են համատարած, իսկ փոքր և գերփոքր կազմակերպություններից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի ընտրվել են 902 կազմակերպություն: Հետագուտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա:

Ժողովածուի այս բաժնում ներկայացված են միայն 2002 և 2003 թվականների տվյալները, քանի որ, ի տարբերություն նախորդ տարիների՝ ցուցանիշներն ամփոփվել են ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ) բաժինների:

Դրամավարկային միջնորդության համակարգի վիճակագրական ցուցանիշները ներկայացված են ըստ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տվյալների:

Ապահովագրական ընկերությունների գործունեությունը բնութագրող առանձին ցուցանիշները ներկայացված են ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված տվյալների:

Արժեթղթերի շուկայի գործունեությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են ըստ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի կողմից տրամադրված տվյալների:

Ժողովածուն հրատարակվում է հայերեն և ռուսերեն լեզուներով:

Մեթոդաբանական պարզաբանումները ներկայացված են ժողովածուի յուրաքանչյուր բաժնի սկզբում:

## Предисловие

В сборнике "Статистика финансов Армении (1999-2003)" представлены статистика государственных финансов РА, показатели системы денежно-кредитного посредничества, финансовые показатели деятельности организаций, а также валютные курсы, установленные Центральным банком (ЦБ) РА и отдельные показатели, характеризующие деятельность страховых организаций и рынка ценных бумаг.

Информационная база статистики государственных финансов сформирована на основе отчетов по исполнению государственного и муниципального бюджетов, а также данных Государственного фонда социального страхования РА, представляемых министерством финансов и экономики РА Национальной статистической службе РА.

Статистика финансов организаций включает информацию о результатах финансовой деятельности коммерческих организаций, платежеспособности, составе средств, их источников образования, а также информацию о состоянии расчетов. Сбор данных был осуществлен методом выборки организаций, включенных в статистический мониторинг на основе форм государственной статистической отчетности. Выборка организаций была осуществлена на основе обновленной базы 8212 действующих организаций бизнес-регистра НСС РА. Из данной базы по основным видам деятельности организаций отсутствуют организации, социальной сферы и сферы охраны природы, основные виды деятельности которых:

- обследования и разработки
- образование
- канализация, удаление отходов и аналогичная деятельность
- деятельность общественных объединений
- услуги по ведению домашних хозяйств
- деятельность иностранных (экстерриториальных) организаций.

Организации, согласно статье 2-ой закона РА "О

государственном содействии малого и среднего предпринимательства", по числу служащих, делятся на 2 группы: крупные и средние, малые и сверхмалые организации. В 1176 крупных и средних организациях было проведено сплошное обследование, а из малых и сверхмалых организаций (генеральной совокупности выборки) методом расслоенной выборки были отобраны 902 организации по марзам, виду основной деятельности и среднесписочной численности служащих. Данные обследованных малых и сверхмалых организаций были распространены на генеральную совокупность выборки.

В этом отделе сборника представлены данные 2002 и 2003 годов, так как по сравнению с предыдущими годами показатели были подытожены по отделам классификатора видов экономической деятельности (КВЭД).

Статистические данные о системе денежно-кредитной посредничестве представлены Центральным банком РА.

Показатели, характеризующие деятельность страховых компаний представлены министерством финансов и экономики РА.

Отдельные показатели, характеризующие деятельность рынка ценных бумаг представлены комиссией ценных бумаг РА.

Сборник издается на армянском и русском языках.

Методологические пояснения представлены в начале каждого раздела сборника.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (1999- 2003)  
վիճակագրական ժողովածու,  
ՀՀ ԱՎԾ-ք.Երևան 2004թ

СТАТИСТИКА ФИНАНСОВ АРМЕНИИ (1999- 2003)  
Статистический сборник,  
НСС РА-г.Ереван 2004г

հայերեն և ռուսերեն լեզուներով  
на армянском и русском языках

Պայմանական նշաններ.  
*Условные обозначения:*

երևույթը բացակայում է	«-»	явление отсутствует
տվյալներ չկան	«. . .»	данных не имеется
չնչին մեծություն	«0.0»	небольшая величина
տվյալները ճշգրտված են	« <sup>◇</sup> »	данные уточнены

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

*В отдельных случаях незначительные расхождения между итогом и суммой слагаемых объясняются округлением данных.*

Internet: <http://www.armstat.am>  
E-mail: [armstat@sci.am](mailto:armstat@sci.am)

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2004թ.  
НАЦИОНАЛЬНАЯ СТАТИСТИЧЕСКАЯ СЛУЖБА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ, 2004г.